ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ
ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE FOR INFORMATICS AND
AUTOMATION PROBLEMS

0014, Երևան, Պ. Սևակի փող., 1
Հեռ. (+37410) 282030, ֆաքս: (+37410) 282050
e-mail: iiap@sci.am

1, P. Sevak str., Yerevan, 0014
Tel. (+37410) 282030, fax: (+37410) 282050
e-mail: iiap@sci.am

2432-90
06.05.2014

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/18» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայությունները (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԻԱՊԻ-ՇՀԾՁԲ-(11/18)-14/2»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Պ. Սևակի 1, 415 սենյակ հասցեով, Ն. Ահարոնյանին, մինչև 2014թ. մայիսի 19-ը, ժամը 12:00-ը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Պ. Սևակի 1, 414 սենյակ հասցեով, 2014թ. մայիսի 19-ի, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար ինտերնետ կապի տրամադրման ծառայությունների գնումը, որը կազմված է 3 չափաբաժիններից: Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցում):

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/18» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում “Շրջանակային համաձայնագրեր” բաժնի “հրավերներում կատարված փոփոխություններ” ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՏՆՕՐԵՆ Վ. ՍԱՀԱԿՅԱՆ